

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Արման Սահակյանի, Գագիկ Մելիքյանի, Արտակ Դավթյանի, Կարեն Ավագյանի, Ռազմիկ Զոհրաբյանի, Ռաֆիկ Գրիգորյանի, Արայիկ Հովհաննիսյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ:

1. 1-ին հոդվածի 2-րդ կետը, 10-րդ և 11-րդ հոդվածները հակասում են օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետին և 53-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին, ինչպես նաև «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասին, որի համաձայն «Համայնքի անունից համայնքային կազմակերպությունն ստեղծում է համայնքի ղեկավարը: Համայնքային կազմակերպության ստեղծման

մասին որոշումը և կազմակերպության կանոնադրությունը հաստատում է համայնքի ավագանին»:
Ուստի, քաղաքապետին Երևանի ենթակայության կազմակերպությունների կանոնադրության, կառուցվածքի, աշխատողների թվի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի վերաբերյալ որոշում ընդունելու լիազորությամբ օժտելը գտնում ենք ոչ նպատակահարմար:

2. 7-րդ հոդվածով նախատեսվող փոփոխությունը, այն է՝ Երևանի քաղաքապետի տեղակալների թվի ավելացումը, լրացուցիչ հիմնավորման կարիք ունի:

3. 8-րդ հոդվածի՝

1) 1-ին ենթակետով նախատեսված օրենքի 49-րդ հոդվածում լրացվող պարբերությունն առաջարկում ենք հանել, քանի որ այն հակասում է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասին, որի համաձայն իրավական ակտն ուժը կորցրած է ճանաչվում իրավաստեղծ մարմնի, դրա իրավահաջորդի կամ համապատասխան լիազորություններով օժտված վերադաս մարմնի որոշմամբ, եթե՝

ա. դադարել է իրավական ակտով կարգավորվող իրավահարաբերությունների հետագա իրավական կարգավորման անհրաժեշտությունը,

բ. իրավական ակտով կարգավորվող իրավահարաբերությունները կարգավորվում կամ կարգավորվելու են այլ իրավական ակտով,

գ. ուժի մեջ է մտել ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտ, որին հակասում են այդ իրավական ակտի դրույթները,

դ. ուժի մեջ է մտել ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիր, որի նորմերին հակասում է այդ իրավական ակտը,

ե. ժամկետային իրավական ակտի համար նախատեսված ժամկետը լրացել է.

2) 2-րդ ենթակետով նախատեսված օրենքի 49-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ նախադասության փոփոխությունն անհասկանալի է. պարզ չէ, թե ինչու է մեկշաբաթյա ժամ-

կետում քաղաքապետարանի պաշտոնական համացանցային կայքում քաղաքապետի բոլոր ակտերի տեղադրման պահանջը սահմանափակվում միայն նորմատիվ իրավական ակտերի տեղադրմամբ:

4. 12-րդ հոդվածով նախատեսված լրացումը հիմնավորման կարիք ունի, քանի որ այն ոչ միայն նվազեցնում է ավագանու դերը, այլ նաև անհրաժեշտ մեխանիզմներ չի նախատեսում անհետաձգելի դեպքերի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու համար:

5. 13-րդ հոդվածով առաջարկվող փոփոխությունը հիմնավորման կարիք ունի, քանի որ քաղաքապետը պետք է պատասխանատու լինի իր կողմից պաշտոնի նշանակված վարչական շրջանի ղեկավարի գործունեության համար, ինչը սահմանված է նաև օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով:

6. Նախագիծն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված օրենսդրական տեխնիկայի պահանջներին:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը, նկատի ունենալով այն հանգամանքը, որ Երևանը որպես համայնք ձևավորվել է դեռևս մի քանի ամիս առաջ, գտնում է, որ համայնքի գործունեության ընթացքում ձեռք բերված փորձի հիման վրա, ամենայն հավանակալությամբ, կառաջանա այլ փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտություն: Բացի դրանից, տեղեկացնում ենք նաև, որ, Եվրախորհրդի հետ պայմանավորվածության համաձայն, օրենքի կիրարկման նկատմամբ իրականացվում է մոնիթորինգ, և նպատակահարմար է փոփոխությունների քննարկման գործընթացում ներգրավել նաև Եվրախորհրդի փորձագետներին՝ հնարավոր այլ առաջարկությունների փաթեթով:

Ելնելով շարադրվածից, Հայաստանի Հանրապետության կառավարությունը նպատակահարմար է համարում առայժմ ձեռնպահ մնալ օրենքում փոփոխություններ կատարելուց և խնդրին անդրադառնալ 2010 թվականի 2-րդ կիսամյակի սկզբում՝ օրենքով նախատեսված՝ Երևան

քաղաքում նոր մոտեցումների կիրառման փորձի ուսումնասիրությունից առաջացած խնդիրների ամփոփումից հետո՝ ընդհանուր փոփոխությունների համատեքստում:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ Վ. Տերտերյանը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագիծ
Պ-748-30.10.2009-SS-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

«Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ եւ փոփոխություն կատարելու մասին

Հոդված 1. «Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 2008 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-5-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 12-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 10-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«որոշում է Երեւանի ենթակայության այն հիմնարկները, առևտրային եւ ոչ առևտրային կազմակերպությունները (այսուհետ՝ Երեւանի ենթակայության կազմակերպություններ), որոնք հանձնվում են վարչական շրջանների ղեկավարների ենթակայությանը.».

2) ուժը կորցրած ճանաչել 1-ին մասի 15-րդ կետը:

Հոդված 2. Օրենքի 26-րդ հոդվածում՝

1) վերնագրից հանել «ՀԵՐԹԱԿԱՆ» բառը.

2) 2-րդ մասի «Նիստերի» բառը փոխարինել «Հերթական նիստերի» բառերով.

3) հողվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 3-րդ մասով.

«3. Երեւանի քաղաքապետի կամ ավագանու անդամների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի նախաձեռնությամբ կարող է հրավիրվել ավագանու արտահերթ նստաշրջան:

Արտահերթ նստաշրջանն անցկացվում է նախաձեռնողի սահմանած օրակարգով եւ ժամկետում:»

Հոդված 3. Օրենքի 27-րդ հոդվածի 1-ն մասի «երկու շաբաթ» բառերը փոխարինել «մեկ ամիս» բառերով:

Հոդված 4. Օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի «ստեղծում է ոչ ավելի, քան 4 մշտական հանձնաժողով» բառերը փոխարինել «կարող է ստեղծել ոչ ավելի, քան վեց մշտական հանձնաժողով» բառերով:

Հոդված 5. Օրենքի 33-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ «4.1-րդ» կետով.
«4.1. Եթե մշտական հանձնաժողովի նախագահի ընտրության ժամանակ խմբակցությունը թեկնածու չի առաջադրում, ապա տվյալ պաշտոնում թեկնածու առաջադրելու իրավունքն անցնում է սույն սույն հոդվածի 3-րդ եւ 4-րդ մասերով նախատեսված կարգով խմբակցությունների գործակիցների հաշվարկի սկզբում ամենամեծ գործակիցն ունեցող խմբակցությանը:»

Հոդված 6. Օրենքի 45-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 2.1-րդ եւ 2.2-րդ կետերով.

«2.1) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով նա դատապարտվել է ազատազրկման եւ կրում է պատիժը.

2.2) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով նա ճանաչվել է անգործունակ, սահմանափակ գործունակ, անհայտ բացակայող կամ մահացած.»:

Հոդված 7. Օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի «3» թիվը փոխարինել «վեց» բառով:

Հոդված 8. Օրենքի 49-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«Քաղաքապետի կողմից ընդունված ակտերը մասամբ կամ ամբողջությամբ ուժը կորցրած են ճանաչվում դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով:»:

2) 2-րդ մասի երկրորդ նախադասությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Երեւանի քաղաքապետի նորմատիվ իրավական ակտերը մեկշաբաթյա ժամկետում տեղադրվում են նաեւ քաղաքապետարանի պաշտոնական համացանցային կայքում:»:

Հոդված 9. Օրենքի 50-րդ հոդվածը «աշխատակազմի» բառից հետո լրացնել «, ինչպես նաեւ Երեւանի ենթակայության կազմակերպությունների» բառերով:

Հոդված 10. Օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3.1-րդ կետով.

«3.1) որոշում է ընդունում Երեւանի ենթակայության կազմակերպությունների կանոնադրության, կառուցվածքի, աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի եւ պաշտոնային դրույքաչափերի վերաբերյալ.»:

Հոդված 11. Ուժը կորցրած ճանաչել 53-րդ հոդվածի 1-ին մասի «2-րդ» եւ «4-րդ» ենթակետերը:

Հոդված 12. Օրենքի 75-րդ հոդվածի 4-րդ մասը «որոշմամբ» բառից հետո լրացնել

«, բացառությամբ անհետաձգելի դեպքերի» բառերով:

Հոդված 13. Օրենքի 91-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետի «Քաղաքապետը պատասխանատու է վարչական շրջանի ղեկավարի գործունեության համար.» բառերը հանել:

Հոդված 14. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

ՏԵՂԵԿԱՆՔ - ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտության

Սույն օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է «Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում տեղ գտած բացթողումների լրացման եւ նկատված թերությունների վերացման հրամայականով: Մասնավորապես,

ա) գործող օրենքով Երեւանի ենթակայության կազմակերպությունների թվում նշված չեն այն առեւտրային եւ ոչ առեւտրային կազմակերպությունները, որոնք գործել եւ ներկայումս էլ գործում են Երեւանի ենթակայության տակ,

բ) Երեւանի ենթակայության կազմակերպությունների կանոնադրության, կառուցվածքի, աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի եւ պաշտոնային դրույքաչափերի վերաբերյալ որոշումների կայացման լիազորությունը վերապահված է Երեւանի ավագանուն, այն դեպքում, երբ որպես այդ կազմակերպությունների հիմնադիր հանդես է գալիս քաղաքապետը, իսկ նման որոշումների կայացման գործընթացն էլ արհեստականորեն բարդանում եւ ձգձգվում է (ուստի այս առումով առաջարկվում է տվյալ լիազորությունը վերապահել Երեւանի քաղաքապետին),

գ) օրենքը չի նախատեսում Երեւանի ավագանու կողմից արտահերթ նստաշրջանների գումարման հնարավորություն, ինչի անհրաժեշտությունը խիստ ակնհայտ է, որի պատճառով էլ նախագծով առաջարկվում է սահմանել ավագանու արտահերթ նստաշրջան հրավիրելու ինստիտուտը,

դ) ավագանու գործունեությունը կաշկանդող է նրա աշխատանքները ռացիոնալ կազմակերպելու առումով բավականին խիստ սահմանափակում է պարունակում օրենքի 33-րդ հոդվածը, որը սահմանում է մինչեւ 4 մշտական հանձնաժողով ստեղծելու իրավասություն, իսկ 4 հանձնաժողովի միջեւ ավագանու լիազորությունների համաչափ բաշխումը գրեթե անհնարին է,

ե) օրենքում թերի են սահմանված Երեւանի քաղաքապետի, որպես կարելուր պետական պաշտոնյայի, լիազորությունների վաղաժամկետ դադարեցման հիմքերը, որոնք առաջարկվում է լրացնել նախագծի 4-րդ հոդվածով,

զ) օրենքում տեղ է գտել նաեւ այնպիսի բացթողում, որն ըստ էության անհնարին է դարձնում քաղաքապետի կողմից մի շարք հարցերի լուծման ընթացքում իր լիազորությունների իրականացումը: Մասնավորապես, նախկին կարգավիճակով (որպես մարզպետ) քաղաքապետի կողմից ընդունված որոշումներում տեղ գտած թերությունները վերացնելու կամ դատական կարգով բողոքարկվելուց հետո նախկինում ընդունված քաղաքապետի որոշումներում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու, կամ ընդունված որոշումը ուժը կորցրած ճանաչելու անհրաժեշտության դեպքում արդեն նոր կարգավիճակ ունեցող քաղաքապետը կամ ավագանին (որպես տեղական ինքնակառավարման մարմիններ) զրկված են այդ գործողություններն իրականացնելու իրավական հիմքերից, քանի որ օրենքը հստակ չի սահմանում Երեւանի՝ նախկինում ունեցած լիազորությունների մասով ներկայիս Երեւանի իրավահաջորդության դրույթը եւ այլն: